փրկութեան Այն օր կը մատուցանէր Ս. Պատարագը այնքան ջերմեանով, որ ոչ ոք կրնար անոր Պատարագը տեսնել և չյուզուի բարեպաշտութեամբ: Այս սուրբ Խորհուրդի միջոցին այնպէս կը գրաւուէր Աստուծոյ մտածութեամբ որ երբեք մտաց ջրում չէր ունենար, ամէն արարածի գաղափար կը ջնջուէր կարծես իր մտքէն: Եստ ճշգրտագորէն ներկայ կը գտնուէր պաշտօններգութեանց, սակայն այնքան պարմանալի պարեկշտութեամբ որ, եթէ իր կարգին չերգէր, մեռել կամ անպաշտ մարդ մը պիտի կարծուէր: Առաւօտեան ծաղած ժամանակը կ'անցնէր խոստովանանքի ատենին մէջ, ուր կ'ընդունէր ամէն տեսակ ապաշխարողներ անխորհր. բայց աւելի միտած ունէր աղքատներու, տկարամիտներու, վշտահարներու և այնպիսի անձերու որ խոստովանալու խորջում կը պատճառեն. ամէն ոք քոչ սրտով կը մեկնէր, իր քովէն Անհատաւոր եռանդով ետեւէ կ'ըլլար քաղաքներու և աւաններու մէջ բարոգիւն. իսկ գիւղերու և գիւղակներու մէջ միայն Քրիստոնէական Վարդապետութիւն կ'աւանգէր, սորվեցնեցով միտ միտ ժողովուրդին: Հաւատքով կը զօրանային աղօթելու, խոստովանելու եղանակը, Քրիստոնէական առաքինութիւնները և յատկապէս ամէն մարդու իր վեհակին համեմատ փրկուելու միջոցը:

Նոյն ատենները Եապրէի գաւառը մատուցած էր հերետախտութեան ամէն տեսակ աղետներուն քահանաները վտարուած էին, Եփեղեցիները աւերակի վերածուած, Վանքերը քանդուած և աշխարհականացած: Եստ լիմանուէր, Սափյայի դռները խնդրեց ձինկիւրայի Ստեփանոսէն որ հոն քարոզիչներ զրկէ որպէս զի այդ ժողովուրդը մարտութենէ ազատուելու նորէն Եփեղեցիոյ ծոցը դարձնեն: Երբ Սոսրին յանձնուեցաւ այս Առաքելութիւնը, Եապրէ մտնելով ինչ կաւ Աստուծոյ մեծփայլութեան առջեւ, երկրորդաբարութիւն բրաւ գաւառին կողմանէ, և ողջունելով նոյն գաւառին պահապան հրեշտակները և պաշտպան սուրբերը խնդրեց անոնց օգնութիւնը: Այս պատեւրագին հրատարակեց դժոխքի իրեանութեանց քեմ, որ տիրած էին այն ժողովուրդին, և անոնց մէջ հաստատուած էին ամբարշտութիւն և հերետախտութիւն գիւղերուն դէմ երգմանց ցըծութիւն բրաւ, և յետոյ այլ կրնէր ամէն անգամ որ որոշ քարի բռնուէր հերետախտներուն հետ և գիւղաւորաբար անոնց պաշտօնէից և բանաբաններուն հետ, որով հետեւ համալուծութիւն թէ չար ոգին մատուար իշխանութիւն մը ունի հաստատուելու հոգին երբեք վրայ, որոնք աւելի կամ նաւաղ անոր ազդեցութեան տակ կը գտնուէին միշտ:

(Շաբաղակի)

ՀԱՅԵՐԵՐ ԱՏԱՌԹԻՒՆՆԵՐ
..ՍՄԱՆՈՐՈՒՆ ԲՐԱՏՈՒՄԻ՝ ԳՐԵՆՆԵՐ

ՊԵՐՏԱՆԻՍՏԱՆԻ ԵՄԲԱՆՈՒՄԻՆ
ԳԳՈՒՆԱՆՈՒՄԻՆ ՎԵՐԵՆԻ
(Եստ.)

Սէր պիճիճ ունենալ ամենուն. բայց ընծաներինը օգտակար չի:

Եստ կը հանդիպի ու անծանօթ ամէն մէկ լայն համալուծ փայլի. սակայն անոր ներկայութիւնը ծանոթութեան այնքան կը մրացնէ:

Կը կարծենք երբեմն որ այդոց հաճելի կ'ըլլան մեր մօտեմտութեամբ ու կը սկսինք եւս առաւել ծանօթի ըլլալու մեր անոպայ ընտանոթեան երեւան գալով:

ՄԱԼԹԱՅԻ

ՍՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԺՈՐՈՎԸ

Այս տարի Արշերկրականի Մալթա կղզուոյն մէջ կատարուեցաւ Ա. Հաղորդութեան տարեկան Համաժողովը. թէեւ այնքան մեծ չի նախընթացներուն արտաքին ամենաշեղծ փառաւորութեան չի կրնար համեմատուիլ, եթէ յիշուին մանաւանդ Էդմոնդ Մոնրեալի, Մատրիաի ու Վիեննայի կարծեա զիպական հանդիսութիւնները, այստ. հանդերձ Հաւատքի ցոյցը քոզցեաւ աւելի եւս շեղ տուած եղաւ, երբ ազգք և ազինք, թէեւ թուական նուազ համեմատութեամբ զիմեցին կապոյտ աշխներու մէջ իրրեւ փառանեզ զմրուխտ մը պերճացող Կղզեակին, նոյն յատ նուէն համօրէն մարդկութեան փառաբանելու համար փառաց անմահ Թագաւորը. իր անհուն Սիրոյ, Խորհուրդին մէջը. Այդ Կղզին, ուր Հնարութեան Անօթն Պօղոս Առաքեալը մոլորութեան իժը թոթուեց ձգեց, բոցեւրու մէջ՝ այրելու մոխիր դառնալու, և քաղաքագէտ Բրիտոսոյ՝ յոյս ազգաց, այդ Կղզին, որ կը պանծայ փառաւոր անցեալով մը, իր յաղթանակներով, իր հռչակաւոր ասպետներով, իր անյաղթելի հաւատքով, այդ երջանիկ դարնաւարոյ Կղզին, իր ամբողջութեամբ իրրեւ մարդկութեան սրտին մեծ խնկարկաւոր կրկնաւոր բուրումներ ծխեց Արքա:

յից Արքային առջեւ, բարուններ խոնարհ
երկրագութեան, անկեղծ շնորհակալութեան,
անպարագրելի սիրոյ, յուսոյ և Հաւատքի,
ահաւոր փորձանքներու առջեւ աղերսարկու
համակամութեան և ողջակիզուող զոհաբե-
րութեան: Եւ զարնան արեւուն ճառագայթ-
ներուն ցնծալից սրսկումին նման, Երկնից
Տէրը երբ մեծ թափորով կը տարուէր իր
Պաշտօնէին բազուկներուն վրայ, Լոյսը ճշ-
մարիտ, սփռեց իր Սիրոյն ու Շնորհացը ան-
մահացուցիչ շողերն անհուն՝ այն Կղզիին, և
անկէ ամբողջ աշխարհիս վրայ: Օրհնութիւն
Որդւոյ Դաւթի, Ուսանան, Օրհնեալ եկեալ
յանդէն Տեառն:

Սրբազան Քահանայապետմա մեր Պիոս Ժ,
իր անձին ներկայացուցիչ և Համաժողովին
Նախագահ անուանած էր արդէն՝ զՎսեմ.
Կարդինալ Ֆէրրարթա, 66 տարեկան՝ խոհե-
մազարդ, ծանրաբարոյ, յոյժ առաքինի ծի-
րանաւորը: Ապրիլ 21ին մեկնեցաւ նա Հը-
ռոմէն իր հետեւորդներով, դէպի Միրակուսա-
ուր մեծաւ շքով ընդունուեցաւ տեղւոյն Վի-
ճակաւոր Եպսկ.էն և Իտալիոյ քաղաքական
իշխանութեանց կողմանէ, որոնք ելեւել կ'ը-
նէին Բարձրաստիճան Պատուիրակը մեծարե-
լու՝ ընդունելութիւններով, սեղաններով,
գովաբանութեամբ: Նոյնը եղաւ նաեւ երբ
հետեւեալ օրը մեկնեցաւ դէպի Մալթա:

Անգղիոյ Կառավարութիւնը — դիտեցէ՛ք
որ Բողոքական Անկլիքան Կառավարութիւնը
— Մ. Պապին Պատուիրակ-Միրանաւորը ծովով
փոխադրելու համար մասնաւոր գեղեցիկ զը-
րահապատ յածամբաւ մը յատկացուցած էր,
ամէն դիւրութիւններով, նաւուն անունն էր
Հիւսսու: Երբ կը քայլէր նաւը, Հրամանա-
տարը Կարդինալին ներկայացուց ամբողջ իր
նաւազները, որոնց մէջ բազմաթիւ Կաթողի-
կէներ եւս կային. ամէնուն ալ մէյմէկ յիշա-
տակ նուիրեց Միրանաւորը:

Յաջող ճամբորդութեամբ Ապրիլ 23ին
հասան ի Մալթա. Քաղաքը, զոր արդէն
հիսաքանչ գարուն մը պերճափայլ կ'ընծայէր՝
իր բուրումնաւէտ ամբաւ բուրաստաններով
ու դարաստաններով, չքնադապէս զարդար-
ուած էր՝ իր հիպպարակներու, ամրոցներու,

հին դղեակներու, պաթիսպներու, փողոցե-
րու և կառավարական շէնքերու և ամբողջ
առանձնական տներու վրայ, յաղթական
կամարներով, ծիրանի թաւշեայու մետաքս-
եայ ծածկոցներով, ծաղկեփունջերով, մրբ-
տենիի և վարդերու զրաւանգներով, Քահա-
նայապետական, Անգղիական և ուրիշ ազ-
գերու դրօշներով: Ընդհանուր ցնծութիւն մը
կը տեսնուէր ամէնուրեք, զոր այդ Կղզին և
անոր գլխաւոր քաղաքը Լաւալէթ, շատոնց
չէր տեսած: Հոգեզմայլ և դիւթիչ էր տե-
սարանը:

Հազիւ նաւահանգիստ մտաւ Կարդինալը
բերող նաւը, քսան եւ չորս թնդանօթի հար-
ուածներ գոռացին ողջունելով Եկոզմ ու Պըր-
կոզը՝ բոլոր պատերազմական և այլ բազմա-
թիւ նաւերը դրօշներու ծածանուտ ելեւէ-
ջով և իրենց սուլիչ-պարիկներով (sirène)
ողջունեցին: Բարի գալուստ մատակցին
Միրանաւորը Հիւրին: Քաղաքին երեք հն-
րիւր զանգակները մէկէն սկսան իրենց գան-
գիւններով օղը թնդացնել: Բաղմնթիւ Ե-
պիսկոպոսներ, Իշխաններ և Պատուաճառ
նաւէն դիմաւորելով, Մոլային Նախարա-
րութեան յատուկ շոգեմակոյկով հանցին
զինքը Սէրպաթոյօ, մինչ սկսաւ նուագա-
խումբը Քահանայապետական քայլերդը հին-
չեցնել: Ամբաւ ժողովուրդ կը ծափանարէր:

Կարդինալը մտաւ քառաձի փառաւոր
կառք մը, հետեւորդ ունենալով բազմաթիւ
ուրիշ կառքեր, առաջնորդուեցաւ մօտա-
կայ Եկեղեցին, ուր կարճ արարողութիւն
մը կատարուեցաւ. և անկէ թափորով գնա-
ցին Ս. Յովհ. Մայր-Եկեղեցին, ուր ըն-
դունեցան՝ Կղզւոյն Եպիսկոպոսն՝ Արհ. Բէյա
և Անգղիական Թագին Ջատարոզը: Պատ-
ուիրակը Քահանայապետական Օրհնութիւնը
տուաւ: Այն տեղէն Կարդինալը դիմաց Եպիս-
կոպոսարան, ուր պիտի օթեւանէր:

Կարդինալ Պատուիրակը պաշտօնապէս
այցելութիւն վերադարձուց Կղզոցն Կառաւա-
կարիչ Սըր Լայսլի Բէյօնի և Մովակալ Մելի-
նի: Ծաշեց Կառավարիչին քով:

Աշխարհիս ամէն կողմերէն բազմաթիւ
Եպիսկոպոսներ, Բարձրաստիճան Եկեղեցա-

կաններ և անհամար բազմութիւն հաւատացելոց հասած էր :

Կարդինալը նոյն առաւօտը հետեւեալ հեռագիրն ուղղեց առ Նորին Վեհափառութիւն , Գէորգ Ե . Թագաւոր Անգղիոյ , ի Լոնտոն .

«Մայրա եղելով ուր եկած եմ այն նաւով որ Ձեր Վեհափառութեան հրամանաւ իմ օրամարտութեան օակ դռնեցաւ ազնուաբար , յոյժ խղցր պարօք մը կը կատարեմ՝ մատուցանելով Ձեր Վեհափառութեան իմ վառ եւ խորին երախտագիտութեան յարգալի արտայայտութիւնը , եւ կը կցեմ նաեւ իմ եռանդնալից մաղթանքներս՝ Ձեր Վեհափառութեան եւ ամբողջ Արքայական Գերդաստանին կատարեալ երջանկութեան , ինչպէս նաեւ մեծ եւ հոյակապ Անգղիական Ազգին միշտ աւելի աճեցուն բարեյարդութեանը համար :

ԿԱՐԴԻՆԱԼ ՖԵՐԴԻՆԱՆԴ

Նորին Սրբութեան Պիոսի Ժ.ի
Պատուիրակ ի Մայրա

Ապրիլ 23ին , Ժամը 3ին յետ միջօրէի , Համաժողովին բացման արարողութիւնը կատարուեցաւ : Կարդինալը երբ կ'անցնէր կառքով՝ երթալու համար Մուսքա կոչուած Եկեղեցին , որուն երկնաւայաց գմբեթին ներքեւ տեղի ունեցաւ բացումը , խոնուած ժողովուրդը կը գոչէր ծափահարելով : Կեցցե՛ Սրբազան Քահանայապետք , կեցցե՛ մեր Հայրը : Եւ հարիւրաւոր մանուկներ փառատրութեան երգեր կ'երգէին :

Մուսքա լի էր ընտիր բազմութեամբ , որ թէ՛ ճամբորդութեան և թէ՛ Կղզւոյն ու Քաղաքին և ներկայ Սրբազան պարագաներուն առթած հաճոյալից և այլազան զգացումներովն զմայլած էր :

Արհի . Հէյլէն , Նամիւրի այլեւս աշխարհածանօթ արքակեաց Եպիսկոպոսը , որ միայուն Նախագահ է Ս . Հաղորդութեան Համաժողովներուն միայուն Կարգադիր Մասնախումբին , գեղեցիկ ճառ մը խօսեցաւ , աւետելով բարի գալուստ Քահանայապետական Պատուիրակին , և շնորհակալութիւն մատուցելով Նորին Սրբութեան որ բարեհաճած էր այսպէս պատուել Համաժողովը : Նոյնպէս Քրիստոնեայ ժողովրդեան կողմանէ սրտագին շնորհակալութիւններ մատուց Մալթա Կղզւոյն Եպիսկոպոսին , Կառավարչին ու Բը-

նակչութեան ընդհանրապէս՝ իրենց ազնւութեան համար որով հիւրամեծարեցին թէ՛ Համաժողովը և թէ՛ անոր գլխով բոլոր հաւատացեալ օտարականները :

Եռանդադին ծափահարուեցաւ :

(Շարունակելի)

Հ Ա Ի Ա Տ Ք

Համասարած ծագե՛ , Հաւաք , ջի՛նջ արեւ .
Մարդը փրկե՛ ջարակոյսիկն անդունդէն ,
Ուր վայելցնէր , վիշտը հոգին կը ֆանդեն ,
Երբնկութիւնն՝ անոր կու տայ հուսկ քարեւ :

Առանց ֆեղի՛ կեանքն է ծանցակ՝ արդարեւ ,
Մահուան վիճէ՛ արհաւիրքներ կը ժայթքեն ,
Կ'իշխան շանքեր խորհուրդներու քարճուկէն ,
Երկիւն , երկիր կը պարտէ՛ ֆոյ մը սեւ :

Ծագե՛ , պատանքն իսպառ ըրե՛ քնաչիւն .
Բե՛ր երեւան Արքայութեան փառքը շինը ,
Միակ յագուրդն՝ անհունասենց մեր արօին :

Մեր հոգիներ շողերուք օսի յո՛ղ ժայթկն .
Բարիկներովդ երանաւոք եւ անհուն՝
Երկրիս վրայ թո՛ղ երկիւնքի հաւն առնուն :

ԽԱՉԻԿ Վ . ԱԹԱՆԱՍԵԱՆ

ՅԻՔՏԵՐԻՒ ՕԶԱՆԱՄԻ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ

Սուրբ-Վինկենտիոս Պաւլայեցւոյն Ընկերութիւնը մեծահանգէս չքով տօնեց , բոլոր աշխարհի մէջ , իր Հիմնադրին , Յիշատէրիք Օգնանամի Մենդեան հարիւրամեակը : Սրբազան Քահանայապետը այս տօնախմբութեանց աւելի փայլ մը տալու համար իր կողմանէ Բարիզ զրկեց Վսեմ . Վանուդէլլի Կարդինալը՝ Կ'արժէ որ մէկ քանի խօսքով տեղեակ ընենք մեր ընթերցողները Յիշատէրիք Օգնանամի կեանքին և իր հարիւրամեակին առթիւ Բարիզի մէջ տեղի ունեցող սքանչելի հանգէսներուն :

Յիշատէրիք Օգնանամ , ազգաւ Յրանաացի , ծնաւ Միլանի մէջ 1813ին : 1832ին Բարիզ գնաց իրաւագիրտութիւն սորվելու . և հոն մտերմացաւ Լագորտէրի , Մոնդալամպէրի , Ամբերի , Պալանչի և Շաթոպրիանի . և 1833ին

հիմնեց Ս. Վ. Պաւլայեցւոյն ընկերութիւնը։ 1836ին եղաւ վարդապետ (docteur) իրաւագիտութեան։ 1838ին՝ վարդապետ գրագիտութեան։ 1840ին՝ դերուստցի (agrégé)։ 1841ին՝ Լիոնի մէջ ուսուցիչ առեւտրական իրաւանց, ապա Սորպոնի մէջ ուսուցիչ՝ օտար մատենագրութեան։ Սալվանտիի կողմէ ղըրկուեցաւ Իտալիա, ուր բոլոր սրտանց ձեռքնտու եղաւ Պիոս Թ. Սրբազան Քահանայապետին, որ կ'ուզէր գլուխ անցնիլ վերածննալ Իտալիոյ։ 1848ին աշխատակից եղաւ Լագորտէրի Ere Nouvelle լրագրին։ Բազմաբարձիւն ու բազմաշխատ կեանքէ մը վերջ մեռաւ 1853ին հազիւ քառասուն տարեկան։ Ֆրէտէրիք Օզանամ պատմագիրներու մէջ առաջնակարգ տեղ մը կը զբաւէ շնորհիւ իր բազմաթիւ հոյակապ երկասիրութիւններուն, ուր հաւասարապէս կը փայլին հիստորիան, ճշգրտութիւն, վրասիմութիւն, վայելչութիւն և հաստատուն համոզում։ Հաւատոյ ծաւալման ամէնէն գործն անդամներէն ըլլալով, Լագորտէրի և Մանդալամպէրի հետ՝ իր դարուն առաջին կէսին՝ Կաթողիկէութեան ամենէն մեծ փառքերէն մին հանդիսացաւ։

Իր ամէնէն նշանաւոր գործն է Ս. Վինկենտիոս Պաւլայեցւոյն Ընկերութիւնը։ Այս Կաթողիկէ, եղբայրսիրական մարմնոյն նըպատակն է խօսքով ու գործով նիւթական և բարոյական նպաստ մատուցանել մարդկութեան։ Ասոր առաջին կաճառը (conférenc) տեղի ունեցաւ Բարիզի մէջ 1833ին։ 1837ին կաճառներու թիւը հասաւ չորսի։ Այնուհետեւ զարմանալի արագութեամբ ծաւալեցան Ֆրանսայի և ուրիշ երկիրներու մէջ։ Այնպէս որ 1861ին՝ Ֆրանսայի մէջ կար 1500 կաճառ։ Իսկ Ֆրանսայէն դուրս 1800 կաճառէ աւելի։ Այն ժամանակէն մինչեւ հիմայ շատ աւելի բազմացան կաճառները և հիմայ կը գտնուին աշխարհիս ամէն կողմերը։

Այս տարի ապրիլ 26ին իրիկունը Ս. Վ. Պաւլայեցւոյն կաճառներուն Ընդհ. Ժողովը տեղի ունեցաւ Բարիզ, ընդարձակ սրահի մը մէջ, Վսեմ, Պատուիրակ-Կարդինալին նախագահութեամբ։ Ներկայ էին 4000է աւելի մար-

դիկ։ Ժամը ութ ու կէսին Վսեմ. Պատուիրակ-Կարդինալը երեցաւ սրահաբեմին (estrade) վրայ. մեծադիմորդ ծափահարութիւն. ցնծալից աղաղակներ ամէն կողմէ։ Կեցցե՛ Պատուիրակ - Կարդինալը. Կեցցե՛ Պիոս Ժ., Կեցցե՛ Պապը։ Վանու գէլլի Կարդինալը ժպտադէ՛մ կ'ողջունէ հանդիսականները և շնորհակալ կ'ըլլայ ձեռամբացի կըրկին և կրկին, Վսեմ. Պատուիրակը կը բազմի սրահաբեմին մէջտեղը զետեղուած բարձրաւանդակ դահի մը վրայ։ Այլ ու ձախ կողմը կը նստին Բարիզի և Բէնի Կարդինալ-Արքեպիսկոպոսները։ Իրենց հտին կը նստին ուրիշ Արքեպիսկոպոսներ, Վարդապետներ, Օզանամի Ազգականները, և այլ բարձրաստիճան անձնաւորութիւններ։

Երբ ծափերն ու կեցցէները լռեցին, Մ. տը Լանդալ տը Լապօրի՝ Ս. Վ. Պաւլայեցւոյն կաճառներուն Ընդհանուր քարտուղարը, Կարդաց Ս. Քահանայապետին՝ այս հարկւրամեակին առթիւ գրած նամակը, որ ընդհանուր ծափերով ողջունուեցաւ։

Այս նամակին մէջ Պիոս Ժ. կը գովէ Ֆրէտէրիք Օզանամը, որ իր ամբողջ կեանքը (աւաղ, աս կարճ) նուիրեց, գրչով ու գործով երեւան հանելու Կաթողիկէ հաւատքին փրկանք ազդեցութիւնը եւ հանդիսացաւ՝ Քրիստոնեական գիտութեան ամենէն նշանաւոր ախոյեաններէն մին։ Կը գրուատէ յատկապէս անոր հիմնած Ս. Վ. Պաւլայեցւոյն Ընկերութիւնը, որ իրիւ բազմաբեղուն սերմ մը, փութով խորումաս կը հասաւտեւր, եւ անհաւատալի արագութեամբ կ'անէր կը բարձրացար մեծ ծառի մը պէս, եւ իր թաւ ոստերը կը տարածէր ամեն կողմ. բարգաւաճում համեմատ ֆրանսական հանճարին, որ ամենէն աւելի գործն եւ արգասաւոր է կրօնի պայծառութեան վերաբերեալ ձեռնարկներու մէջ։ Այժմ, կը յաւելու Ս. Քահանայապետը, այս տեսարհածաւալ կաճառները մեծապէս օգտակար են, ոչ միայն այդեհածին ժողովուրդներու որոնց իրական նպաստներ կը մատուցանեն քե՛ ժամանակաւոր քե՛ յալեքեմական կեանքի համար. այլ նոյն իսկ անդամակից ընկերներու, որոնց կ'ընծայեն սրբայգման միջոցներ՝ շնորհիւ Քրիստոնեական սիրոյ զանազան գործերու։ Ապա Վսեմ. Կարդինալին Պատուիրակութեան պաշտօն կը յանձնէ։ (Շարունակելի)

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Ընդունեցանք հետեւեալ նամակը.

7 Մայիս 1913

Ազատամարտի Աւստրիա եւ հայ կաթողիկոսները վերադարձութեամբ հետեւեալը թարգմանաբար հրատարակած է 23 Ապրիլ / 6 Մայիս 1195 թիւին մէջ .

«Կ. Պոլսէն կը հաղորդեն Նովոյէ Վրէմիայի. Պապին խնդրանքով ար լուրջ մտահոգութեան մասնուած է Հռոմի հեղինակութեան համար, Աւստրիական կառավարութիւնը գրեց Կ. Պոլսի իր դեսպանին, որպէս զի Հայ Կաթողիկոսներու կողմէն հրաժարեցուցուած թէրզեան Պատրիարքը Բ. Դուռը վերահաստատէ իր պաշտօնին մէջ: Այս ուղղութեամբ կատարուած ճշնշուածին այս առիթի Հայ Կաթողիկոսները իր պատասխան կը յայտարարեն թէ՛ ծայրայեղ պարագային անոնք կը նախընտրեն վերադառնալ հայ եկեղեցիին գիրկը եւ խնդրել Ռուսիոյ հովանաւորութիւնը, քան թէ խոնարհիլ նորէն թէրզեանին որ գիրենք բոլորովին լատինացիներ կը ձգտին իր բողոք, շատ Կաթողիկ Հայ Զատիկի օրերուն ներկայ գտնուեցան հայ եկեղեցական սրբապետութեանց»:

Թէ ո՛րքան ստուգութիւն կը պարունակէ Նովոյէ Վրէմիայի հաղորդուած լուրը, մենք չենք ուզեր հոս քննադատել, սակայն աղեւթուն մէջէն ակն յայնդիման կ'երեւի որ սոյն լուրին հեղինակը Ազատամարտի հետ սերտ յարաբերութիւն ունեցող եւ միեւնոյն նպատակին ծառայող խմբակին գիտումնաւոր հրատարակութեանց գործատունն է:

Այս հրատարակութեան մէջ մտադրութեան արժանի երկու կէտ կայ. առաջինն է սպառնալիք մը որ անշուշտ կը դիտէ կա՛մ Վատիկանը, կամ Օսմանեան եւ կամ Աւստրիական կառավարութիւնները. մենք այնքան բարձր վարչական տաղանդ չունինք վճռելու համար թէ որո՛ւն հասցէին ուղղեալ է սոյն սպառնալիքը. վերջնական վճիռը տալու հոգը կը թողունք իւրաքանչիւրին փորձ դիւանագէտներուն:

Երկրորդ կէտն է Կ. Պոլսի Հայ Կաթողիկոսներու ընդհանրութեան վերադարձած արարք մը, իբր թէ կը նախընտրեն վերադառնալ հայ եկեղեցիին գիրկը եւ խնդրել Ռուսիոյ հովանաւորութիւնը, քան թէ խոնարհիլ նորէն թէրզեանին, (այսինքն Ամեն.

Թէրզեան Կաթողիկոսին, իրենց եկեղեցական Պետին) որ գիրենք բոլորովին լատինացիներ կը ձգտին:

Այս մասին կը բողոքենք, յանուն Հայ Կաթողիկոսներու ստուար մեծամասնութեան, ճշմարիտ Հայ Կաթողիկէիցս վերադարձած ճրի ամբաստանութեանց, իբր թէ կրօնափոխ պիտի ըլլանք եւ Ռուսիոյ հովանաւորութիւնը պիտի խնդրենք:

Ճշմարիտ Կաթողիկէ Հայը կը ճանչնայ իր օրինաւոր եկեղեցական Պետը, կը հնազանդի Անոր եւ կը խոնարհի Անոր առջեւը, վասն զի Կաթողիկէ կրօնին կենսական սկզբունքն է հնազանդիլ իր օրինաւոր Պետերուն. ճշմարիտ Կաթողիկէ Հայը շատ լաւ գիտէ թէ Ամեն. Թէրզեան Կաթողիկոսը զմեզ չի լատինացիներ եւ չի կրնար լատինացիներ եւ թէ ինքը գերազանցօրէն աղգասէր է քան այն խմբակին անդամները: Գոնաւոր Կաթողիկէ Հայը կ'ուրախանայ երբ Բ. Դուռը զինքը վերահաստատէ իր բարեկեցութեան պաշտօնին մէջ եւ քնաւ կրօնափոխ չըլլար եւ Ռուսիոյ հովանաւորութիւնը չի խնդրեր այս պարագային:

Ազատամարտ եւ զինքը իբրեւ իրենց օղկանը ճանչցող խմբակը կրնան ապահով ըլլալ որ, նոյն իսկ ծայրայեղ պարագային, Հայ Կաթողիկոսներու հաղորդին մէկն անգամ հայ էջմիածնական եկեղեցիին գիրկը չի վերադառնար եւ Ռուսիոյ հովանաւորութիւնը չի խնդրեր: Մենք, ճշմարիտ Հայ Կաթողիկէներս, կը ցաւինք ի սրտէ, երբ տեսնենք թէ մեր կրօնակիցներէն մէկն անգամ ուղիղ ճամբէն կը շեղի: Գոնաւոր Կաթողիկէ չէ՛ ով որ չի ճանչնար իր անհրաժեշտ պարտքը հնազանդելու իր հոգեւոր Պետին, որով կ'անստատէ նաեւ Քրիստոսի, որ կ'ըսէ. Որ ձեզ լսէ՛ ինձ լսէ, եւ որ զմեզ լսեալդ զիս անալոգէ: Եթէ Քրիստոսի ճշմարիտ աշակերտ կ'ուզենք ըլլալ, պէտք է որ սիրայօժար եւ անպայման հնազանդիլք եկեղեցւոյ անսխալ ու Գերագոյն Վարդապետին՝ Ս. Քահանայապետին Պիտի Ժ.ի, եւ Անկէ ճանչցուած հոգեւոր Հովիւներու:

ԲԵՐԱՅԻ

ՄԱՐԱՇ ԶԵՄԱՍԹՐԱՊՈՒՆ

ՀԱՄԱԿԱՆ ԵՒ ՏԻՆԻՑԵՍԻ

Մարաշտան իրապեան Յովնէի Էֆէնտի-
տէն ալորդը մէքթուպա նազարէն՝ մայրա-
պետէրին մէքթէպինին պինասը էսքիլիկինէ
մէպնի երգըմադա եիւզ թուծմըլ օլորդըն-
տան պիւթիւն ձէմասթըմըլ տին վէ վիճ-
տանընըն տէմասընը տինլէյիպ վէ Քիլիսայը
Շէրիֆիդէ օլան սատազաթ վէ մէրպուլթի-
յէթլէրինին նիշանէի մատտիլէսի օլմագիւզ-
րէ, հալի հարպըն ինթան իթտիլի սէֆալէթէ
բաղմէն ձէգանմէրտանէ պիր տարէթտէ քէ-
սէսինի աշմըլ վէ պիր խայըլ բարա թօրա-
նըմըլ տըր. եալընըլ իրապեան Փանդիւսը
540 լիրա վէրմիշ տիր. իրապեան Փանկոր
էֆէնտի 250 լիրա. Մարաշտա Քիլիսամըղըն
շէրէֆ ու իզգէթինին թէգեիտ վէ իթիլսը
մագսէթիլէ գիւքուր վէ ինասա ախտ մէք-
թէպլէրիմիլին իսլահ վէ հալը մուսթազամի
իֆրաղը խուսուսընտա ձէմասթտա պիր ազ-
մը համիլէթ քեարանէ ույանտը. Պու մագսա-
տը միւպէճճէլին թէսիլի հուսուըլ իշիւն
մուտաթ վէ մանէվի սարֆը հիմմէթ իտէն Ար-
փիսթընտան Գերասպայժառ հազրէթլէրինէ տա-
թի միմնէթտար տըր. ախի հէվէսին տալի
թէմլէրիմիլտէ տախի ույանմասընը ան սա-
մալիլ զաւլա թէմէննի իտէրիմ.

ՌԱՅԱՅԵԼ ԽՐԼԱՔԵԱՆ

2 Մայիս 1913 Պէյ-Օղլը

Մեծաւ գոհունակութեամբ հրաւարուեցին այս
նամակը, Մարաշուց Կարողիկէ հաւատքին զուար-
թառա պատիւները արձանագրելու համար. վստահ ենք
որ այս կրօնաւէր զգացուծը ամէն տեղ ուրախութեան
առիթ եւ բարի օրինակ պիտի հանդիսանայ:

ԾԱՆ. ԻՄԲ.

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՐՈՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Սորազան Բուհանայապետը բաւական կազմու-
թեամբ զլրուով փոփաք յայտներ է Վատիկանի պար-
տէզներուն մէջ պաղտ մը ընելու, և ունենալով ին-
ները փոփաք. սակայն ինքրուներ է իրմէ որ ժամա-
նակ մը ևս հանգիստ ընէ:

Տիպին Անգոնի Բուսանդարէ, Յրանալի նա-
խագահին մոյքը, վախճանեցաւ վերջերս բարեպաշ-
տութեամբ. Յուզարկաւորութիւնը կատարուեցաւ
մեծուշուք հանդէսով. ներկայ էին քաղաքի բա-
հաններ և քերականներ աշխարհականներ. Ներկայ
էին նաև նախագահը և իր բարձրաստիճան պաշտոն-
եաները, որոնք Մեծայանի միջոցին հախազահին հետ
յորդանիքով համարեցին մաղդափն:

Պորթի Արքեպիսկոպոս Արհի. Տիպուս և
Լիւստի Եպիսկոպոս Արհի. Գաթօ յարգալիք և փո-
րին շնորհակալութիւններ յայտներ են Պորտոյի Արք.
Վեսմ. Ամարիէօ կորգինային Bulletin de la semaine
շուրաւ թերթը արդիւնէն համար:

ԷԶՄԻԱՍՏՆԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Էջմիածնականաց Խառն Ժողովը իր հրաժարա-
կանը տուաւ ընդհ. Ժողովին, որ արտակարգ կերպով
գումարուեցաւ կիրակի օրը. Ընդհ. Ժողովը մերժեց
Խառն Ժողովին հրաժարականը և իր մէջէն այլ եւ այլ
կուսակցութեանց պատկանող հինգ հոգի ընտրեց. որ-
պէս զի աջակցին Խառն Ժողովին:

Երուսաղէմի վանքը խառնակ վիճակի մը
մէջ է. Պարքաւ էֆ. Փափազեան որ կեդր. Վարդա-
թեան կողմէ Երուսաղէմ գացած էր վանքին գործերը
կարգադրելու համար, յարձակուով կրեւ և խոշտան-
գուեր է Միաբաններէն Պարս. Տեղապահը արգելա-
փակ կացութեան մը մէջ է:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐ

Տերութեանց պետականները տուին Օսմ. կառա-
վարութեան հետեւեալ հաւաքական ժանուցագիրը.

Պետագրեպիս, դեսպան Լաւրենտիւմգաթիյ.
Անգլիոյ, Յրանալի, Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Իտալիոյ
պաթի ունինք զեկուցանել Օսմ. Կայս. կառավարու-
թեան քէ տերութիւնք ընդունած ըլլալով դաւանակից Պե-
տութեանց պատառիւսը այն ժանուցագրին, որով տե-
րութիւնք բանաձեւած էին հաւատարման հիմներ, եւ ի
նկատի առնելով որ անոնք ընդունած են այս հիմներ,
գիրենք հրաւիրեցին պնդիւրապէս դադրեցնել բեւաճու-
թիւններ եւ նշանակել իրենց պատուիրակներն ու ա-
նանց հաւաքաւայրը, հաւատարման բանակցութեանց հա-
մար:

«Պատեցն ունինք մեր կառավարութիւններէն յա-
նուն անոնց թուրքոյ ռազմելու միեւնոյն հրաւերը, զոր
կը կատարենք ներկայիս»

«1 Մայիս 1913

Անցեալ շաբաթ իրիկուն արտաքին գործոց
նախարար Սայիտ Հալիմ փաշա Աւստրիական Դեսպան
Մարքիզ Բալլափրիէի յանձնեց թուրքոյ հետեւեալ
պատառները Տէրութեանց վերոյիշեալ հաւաքական
ժողովոյ գրին»

«Ասորագրեալս, արտաքին գործոց նախարար Ն.
Կայսր. Վեհափառութեան, Սուլթանին, ծանօթացայ պա-
րունակութեան հաւաքական զեկոյցին, զոր Նոյնին Վը-
սեմութիւն Դեսպանին, Աւստրիական գաղտնի, Անգլիոյ,
Ֆրանսայի, Ռուսիոյ, Գերմանիոյ եւ Իտալիոյ, բարե-
հաճեցան իրեն յանձնել Մայիս 1ին»

«Ի պատասխանի պատիւ ունի զեկոյցանելու հո-
ցին Վեսեմութեանց թէ Կայս. Կառավարութիւնը ի նը-
կատի առնելով այս զեկոյցը. կը յայտարարէ թէ կ'ըն-
դունի Տէրութեանց հրաւերը՝ անմիջապէս դադարեցնելու
բեմադրութիւնները եւ նշանակելու իր լիազօր պատուի-
րակները, հաստատելու բանակցութիւնները կատարելու
համար»

«Սու. Կառավարութիւնը նշանակած ըլլալով իր
լիազօր պատուիրակները, իր կողմէ Լոնտոն քաղաք
կ'ընկեր իր հաւաքական պատուիրակներուն»

«ՍՍՅԻՏ ՀԱՆԻՄ»

Ռ. Դուռը նշանակեց իր պատուիրակները
հաշտութեան բանակցութեանց համար որ տեղի պի-
տի ունենան ի Լոնտոն. Ա. պատուիրակն է Պերլինի
նախորդ գեսպան Զօր. Օսման Նիզամի փաշա, Բ.
պատուիրակն է հանրօգուտ շինութեանց նախարար
Պարա Էֆ., իսկ Գ. պատուիրակն է արտաքին գոր-
ծոց խորհրդական Ռէշիտ պէյ Ս.յո կարգադրու-
թիւնը եղաւ, որովհետեւ Հազգը փաշա, Հիւսէյին
Հիւսի փաշա եւ Թէվֆիգ փաշա չուզեցին ըլլալ Ա.
պատուիրակ»

Նիզամի պէյ, օսմ. յեղափոխութեան հեղի-
նակներէն մին, եւ իր թիկնապահը, որ Ալպանիոյ ներ-
սերը բոլորականութիւնն է նպաստ օսմանեան թեկ-
նածուի մը Ալպանական գահուն համար, ատրճա-
նակի հարուածով սպաննուեցան Վալոնայի նաւա-
մատոյցին վրայ»

Անատոլի եւ Սուրիոյ նահանգներուն բա-
րենորդման համար օսմ. կառավարութիւնը մասնա-
ւոր ջանքեր կ'ընէ»

Գարատաղի թագաւորը ժողովի հրահրեց
բոլոր զօրավարները եւ արքունի ժողով եւս գումա-
րեց. Ամենարուսն վիճարանութեան մը ետքը մեծա-
մասնութիւնը որոշեց որ Գարատաղի գլուխ ծռէ Նա-
րոպայի որոշմանը առեւ, հակառակ գահաժառանգ
իշխան Տանկոյի յայտարարութեանը թէ, Եքսորա
Չոնակորայի նոր մայրաքաղաքն է Չոնակորայի գահ-
լիճը անհամաձայն ըլլալով արքունի ժողովին տուած
որոշման, հրաժարական տուաւ, զոր ընդունեցաւ Նի-
քոյա թագաւորը»

Չոնակորեան. կառավարութիւնը պաշտօնապէս
զեկոյց թէ իր արժանապատուութիւնը ընդգիմանա-
լով տեղի տալու տառնականի ցոյցի մը առջեւ, Եքս-
որայի բախտը կը յանձնէ մեծ տէրութեանց ձեռքը»

Միջազգային նաւարածին հրամանատարը յա-
րաբերութեան մասը Եքսորայի կառավարին հետ,
որ քաղաքը պիտի յանձնէ սպաննու յանձնաժողովի
մը»

Պաշտօնապէս կը հաւատարմութիւն թէ Բշ. օր-
ուընէ սկսեալ 10 օրուան համար եւս երկարաձգուել
է զինագուլը թուրքոյ եւ Պաշկարիոյ միջեւ»

Էլիսանտի ոստիկան զինուորներէն 200 հո-
գի ցոյց մը Պաշկարի յարձակելու են կառավարու-
թեան կեդրոնատեղւոյն վրայ, ընդհ. ժողովին սրահին
ապակիները ջարդեր են Մեծամեծ շնորհմանով
հազիւ կարելի եղեր է զիրենք հանդարտեցնել»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	289
Տէր Կոմիտաս Բահանայ	292
Բաբայ Բիւմ Բիւ	294
Իմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	296
Եօթնեակ Բերսեղեի	297
Մայրայի Ս. Հաղորդութեան համաժողովը	298
Հաւատք	300
Ֆեֆեթի Եօթնեակի հարիւրամեակը	300
Լուսաբանութիւն մը	302
Մարտե նշմարարները համիլեթի սինիլէսի	303
Տեղեկագրական	303

ԱՐՏՈՐԱՏԵՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԼՆ

ՏՆՈՐԷՆ-ԽՅԱՍԿԱՍՊԵՏ

ԳԵՌՈՐ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպագր. Կ. Աւստրիական Երաբարքերի. Բեռն, Պայրամ փողոց քիւ 6, Կ. Պոլիս

ԲԱԺԱՆՊՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դնկ.:— Արտասահման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վնարմունք կանխիկ են:

ՀԱՍՅԷ.— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն ղրկուած ո՛ր եւ է յօդուած: 3.— Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէ՛տ է գրուած ըլլան թուրքի մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրաժեշտ երկու դանեկանի նամակագրութիւն միասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիրքեր, տեսքներ, հրատարակութիւններ, բարդեր, բարդ-տաշտներ, մանագրներ, եւն., եւն.: Գիրքեր անմեղեղի կերպով տալու են: Գեղեցկագիտական նաւակի եւ տպագրական մագրութեան կողմանէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի մնան:

ԿԸ ԾԱՌՈՒԹԻՒՆ «Տարեկան Սկզբունք Բրիտանական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դնկն.:
